

ՀՀ առողջապահության նախարար
պարոն Արսեն Թորոսյանին
ք.Աբովյան Հանրապետության 14, բն 38 բն.
Արթուր Պետրոսյանից
Հեռ. 093527386

Ցավոք արդեն մի քանի տարի է պայքարում ենք շաքարային 1-ին կարգ դիաբետ հիվանդության դեմ, եվ նկատելի է որ այս տարիների ընթացքում բավականին աշխատանք է կատարվել հիվանդներին ժամանակակից դեղորայք ապահովման հարցում: Մեր շնորհակալությունն ու խորին երախտագիտությունն ենք ցանկանում հայտնել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարին, ողջ անձնակազմին, հատկապես «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիական կլինիկայի ղեկավար Ելենա Աղաջանովային, բժշկուհիներին եվ ողջ բուժանձնակազմին Ձեր կատարած հետեվողական ու հոգատար աշխատանքի համար: Մեր շնորհակալությունն ենք ցանկանում անպայման հայտնենք այն մարդկանց որոնց աշխատանքի ու ջանքերի շնորհիվ այսօր շաքարային 1-ին տիպ դիաբետով երեխաները ստանում են անհրաժեշտ երկարատև եւ արագ ազդող ինսուլիններ, թեստ-երիզները: Ձեր կատարած հոգատար աշխատանքի արդյունքում այսօր հիվանդ երեխաները արդեն ստանում են ժամանակակից դեղորայք որը կիրառում են Եվրոպայում ել այլ զարգացած երկրներում: Գիտենք որ բազմաթիվ դժարություններ եք հաղթահարել դրա համար շնորհակալ ենք, բազմաթիվ անապահով ընտանիքների երեխաներին ժամանակակից դեղորայք ապահովելով նպաստում եք երեխաների առավել արդունավետ բուժմանը: Ցանկանում ենք նշել որ արդունավետ բուժմանն է նպաստում նաեւ որ այսօր Ձեր ղեկավարած նախարարության կազմում կա «Մուրացան» հիվանդանոցի էնդոկրինոլոգիական կլինիկայի այսպիսի բուժանձնակազմ Ելենա Աղաջանովայի ղեկավարությամբ: Արհեստավարժ ու բարձր գիտելիքներով բուժանձնակազմը իր հոգատար ու ջերմ վերաբերումնքով մեծ աշխատանք են կատարում այսօրվա դժվար պայմաններում: Բավականին օգնություն են ցուցաբերում հիվանդ երեխաներին ու նրանց ծնողներին: Խնդրում եմ այս ամենը շնորհակալ եմ որպես չափազանցված գովասանք, այս ամենը գրում եմ չափազանց հուզված տեսնելով «Մուրացան» էնդոկրինոլոգիական կլինիկայի բուժանձնակազմի վերաբերումքը: Ինչպես չհայնտել խորին երախտագիտություն, երբ տեսնում ես որ ամեն վարկյան (աշխատանքաին, ոչ աշխատանքին, գիշեր թե ցերեկ) նրանք միշտ բարիացական ու անշահախնդիր պատրաստ են օգնության: Մեր երեխայի բուժող բժշկուհին Սոնա Հակոբյանն է, ցանկանում եմ նշել որ «Մուրացան» էնդոկրինոլոգիական կլինիկայի ողջ անձնակազմն է արժանի շնորհակալության ու հարգանքի քանի որ ամեն անգամ ականատես ենք եղել նրանց հոգատար վերաբերմունքին:

Հարգարժան Առողջապահության Նախարար կրկին անգամ շնորհակալ ենք որ այսօր Հայաստանում ունենք միջազգային չափորոշիչներին համապատասխան էնդոկրինոլոգիական կլինիկա (բուժանձնակազմ), միզուցե շենքային պայմանները մի քիչ չեն համապատասխանում բայց հույս ունենք որ մոտ ապագայում այս հարցը կշտկվի, քանի որ նման բուժանձնակազմը պետք է որ աշխատի ավելի լավ ու հարմարավետ պայմաններում: Հնարավորության դեպքում խնդրում ենք ինչոր կերպ խրախուսեք նրանց բարեխիղճ աշխատանքը , քանի որ միշտ պատրաստ ու բարիացական վերաբերմունքը պետք է բարձր գնահատվի ու լավ օրինակ լինի մյուսների համար:

Հարգանքներով՝

Արթուր Պետրոսյան,